

ԱԶ ԳԱՅԻՆ

Ահա այսօր Ապրիլի վեցին լրանում է մի տարին այն նշանա-
ւոր օրից, երբ կարգադրութեամբ և հրամանաւ Վեհափառ
Հայրապետի ամենայն Հայոց Տ. Տ. Մակարայ սկսվեց Սուրբ Էջ-
միածնի Մայր Ցաճարի նորոգութիւնը և դրուեց նորա հոյակապ
ուպարանի հիմքը։ Անշուշտ ամեն մի Հայ, որ գիտէ Սուրբ Էջ-
միածնի կրօնական - պատմական բարձր նշանակութիւնը Հայ
ազգի վերաբերութեամբ և բարոյապէս կապուած է այս նուի-
րական համազգային Հաստատութեան հետ, հետաքրքիր կլինի
իմանալ թէ՛ այս ամենակարեւոր գործոց սկզբնաւորութիւննե-
րը ինչ հետեւանք և արդիւնք ունեցան այս ամբողջ մի տարուայ
ընթացքում։ Ուստի Արարատ ամառգիրս քաղցր պարտաւո-
րութիւն է համարում սոյն երկուողիւս ծանուցանել Հայ Հա-
սարակութեանը նոյն թէ՛ Մայր Ցաճարի ներսի յատակը, որ
երեք աստիճանով ցած էր արտաքուստ շրջապատող պարսպա-
միջի հրապարակի մակերեւութից, այժմ՝ մի վերշուկայափ բարձր
է նոյն հրապարակի մակերեւութից, ըստ որում՝ յիշեալ պա-
րսպամիջի հրապարակում ի վաղուց անտի հետզհետէ աւելա-
ցած սւ բարձրացած վեց հարիւր սւթսդն և հինգ ու կէս խո-
րանարդ սաժէն հողի թանձրութիւնը փոքրելով՝ պարսպից
դուրս թափուեցան, որով Մայր Ցաճարը, որ առաջ հրապարա-
կի ամենացածր տեղն էր բռնում, այժմ՝ իւր արտաքին դիրքով
յիշեալ հրապարակի ամենաբարձր կեդրոնավայրն է ներկա-
յացնում։

Երկրորդ՝ Ցաճարի ստորոտը շրջապատող քոյքայուած ու
մաշուած եռակարգ աստիճանները, որոց ճեղքուածներէից ջրի
մեծ քանակութիւն էր ներս՝ դէպի հիմքը ծծուում, բուրոսվին
վերցուեցան և նոցա տեղ շինուեցան մի սաժէն բարձրութեամբ՝
նեղ ու զառիվայր մակերեւութով երկկարգ աստիճաններ, որոնք
գօտու պէս Ցաճարի ստորոտը ամրապինդ գրկած՝ թէ հաստա-
առն են պահպանում նորա հիմքը և թէ նոցա նեղ ու թէ ք

մակերեւութի վերայ անձրեւ ու ձիւն մնալ չկարողանալու պատճառաւ Ցաճարի հիմքն ու պատերը ազատ են մնում խոնաւութիւնից:

Երրորդ՝ զանգակատան մէջն ու աջ ու ձախ կողմերը՝ և նորա առաջի հրապարակը սալայատակուեցան առաջուանից աւելի ընդարձակ տարածութեամբ, փոխուեցան և զանգակատան սիւների հնացած ու մաշուած քարերը: Ցաճարի հիւսիսային պատի հիմքից սկսեալ 2 սաժէն տարածութեամբ գետինը սալայատակեցաւ, միջաւայրում Ս. Ստեփաննոսի սեղանի յետքսւմ կիսաբոլորակաձև հրապարակ դուրս բերելով ըստ առաջնոյն: Ցաճարի արեւմտեան կողմում գտնուած շինութիւնների առաջ, որոց կարգումն է և կաթուղիկոսարանը, երեք սաժէն լայնութեամբ և 144 արշ, երկայնութեամբ սալատակներ շինուեցան, նոյնպէս և հիւսիսային կողմում գտնուած միաբանից սենեակների առաջ՝ երկու սաժէն լայնութեամբ և 149 արշ, երկայնութեամբ, եռակարգ աստիճաններ կառուցանելով նոյն սենեակների մուտքի առաջ, սալայատակներ շինուեցան նոյնպէս և Ցաճարի արեւելեան և հարաւային կողմերում գտնուած շինութեանց առաջ, առաջինում 1 սաժէն լայնութեամբ և 136 արշ, երկայնութեամբ, իսկ երկրորդում $1\frac{1}{2}$ սաժէն լայնութեամբ և 149 արշ, երկայնութեամբ: Նորոգվեցան յիշեալ սալայատակների եզերքով պարսպամիջի չորս կողմը ման եկող քարակոփ առուակը 180 սաժէն երկայնութեամբ, սալայատակուեցան Ցաճարից դէպի միաբանից սենեակները տանող երեք ճանապարհներ, և դէպի Կաթուղիկոսարանն ու ճեմարանը տանող մի մի ճանապարհներ:

Չորրորդ՝ ներքին պարսպամիջից դէպի դուրս տանող «Տրդատագուռն» անուանեալ դարպասի մէջ և դէպի Կաթուղիկոսարանի ներսը տանող դարբասի մէջ յաւելացան եռակարգ աստիճաններ, նոյնպիսի եռակարգ աստիճաններ շինուեցան և դէպի Մայր Աթոռոյս հիւրանոցը տանող մուտքի առաջ: Եւ հինգերորդ՝ Ցաճարի չորս կողմերսւմ գտնուած շինութեանց առաջ ձգուեցան կանոնաւոր ուղղութեամբ երկկարգ ծառուղիներ նորատունկ անտառային ծառերով և վարդենիներով: Վեցե-

րորդ նորոգուեցաւ միաբանից ջուր մատակարարող «Քանքան» անուանեալ աղբիւրը իւր 12 սաժէն երկայնութեամբ երկաթեայ խողովակներով:

Մայր Աթոռոյս նոր Տպարանը շինվում է Տաճարի արեւելեան կողմում նորա արտաքին և ներքին պարսպների միջավայրում՝ ճեմարանի մօտ. սա արդէն մօտ է վերջանալու. նորա հիմնական պատերի վերայ այժմ ձգվում են նորա կամարները: Ամբողջ շինութիւնը քարուկրեայ է. հիմքը մի սաժենից աւելի գետնի խորութեան մէջ ամրացած. նորա մեծադիր երկու գլխաւոր մուտքերը և լուսամուտները զարդարուած են գեղեցիկ ծաղկեկար փորուածքներով և գրուագներով: Շինութեան երկայնութիւնը հիւսիսից հարաւ 51 արշ մի. քառորդ, լայնութիւնը արեւմուտքից արեւելք 24 արշ. մի քառորդ և բարձրութիւնը 11 արշ. Այս շինութիւնը պարունակում է իւր մէջ ա. գրաշարանոց, բ. տպարան, գ. թուղթ թրջելու սենեակ, դ. ձուլարան, է. սորա ամբարանոցը, Ղ. Տպարանական ժողովոյ խորհրդարանն ու գրադրանոցը, է. գրադարանը և ընդարձակ նախագաւիթը, որ արեւմտեան մուտքից ձգվում է մինչև արեւելեան մուտքը: Տպարանի մնացեալ կարեւոր շինութիւնները պէտք է կառուցուին նորա արեւելեան բազում:

ՀԱՇԻՒ ԵՒ ԵՒ ՄՏԻՑ

Հայտնէայ Բարեգործական ընկերութեան Թիֆլիսւմ ոչնեալ հաւոթ 1-ից 1888 թ. յհաւոթ 1-ն 1889 թ.

ՄՈՒՏՔ.

Անցեայ տարւամից մնացած է՝

Բ. Ս.

1 Տոկոսաւոր տրոճէտոմներ է գումարի

8768 84

2 Ընթացիկ հաշիւ առեւտրական բանկում

2700 53